ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/93

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԲԻ ԲԻ Էս ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Ն. Բալայանի և Ա. Ամիրաղյանի (լիազորագիր՝ տրված 15.12.2021թ.),

քննելով Տավուշի մարզպետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների ԱՊՊԱ ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից 07.12.2021թ. ներկայացված (08.12.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/93 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 07.12.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Ի. Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ Տավուշի մարզպետարանի կարիքների համար՝ «ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ)» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Հարցում):

Վերոհիշյալ հարցման մասնակցության հայտեր են ներկայացրել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությունը, «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերությունը և «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը: Վերջինս չի հանդիսանում ապահովագրական ընկերություն:

Համաձայն «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մրցույթի (տվյալ դեպքում գնումը կատարվել է գնանշման հարցման ձևով, այլ ոչ թե մրցույթի) հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 26.11.2021 թ. ժամը 14:00 տեղի ունեցած նիստի թիվ 03 արձանագրության 2-րդ կետի՝ գնային առաջարկ ներկայացրել են «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությունը և «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը (արձանագրության մեջ սխալ է նշվել վերջինիս կազմակերպաիրավական ձևը)՝ բոլորը նույն չափի գնային առաջարկով: Նշված արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցներից միայն «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության հայտն է մերժվել սահմանված կարգի համաձայն, քանի որ մասնակիցն արմեպս ծրագրում որևէ փաստաթուղթ չի կցել: Հանձնաժողովը որոշել է երեք մասնակիցներին 30.11.2021 թ. ժամը 11.00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի 29.11.2021 թ. ժամը 14:00 տեղի ունեցած արտահերթ նիստի թիվ 04 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ չեղարկվել է թիվ 03 արձանագրության 3-րդ կետը մասնակցի կողմից բանավոր պահանջի հիման վրա, քանի որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության հայտը «Հանրային հայտեր բաժնում» արտացոլված է, սակայն

տեխնիկական խնդրի պատճառով հայտը չի երևում armeps.am/epps ծրագրում, որտեղ և պետք է գնահատվեին հայտերը: Թիվ 04 արձանագրությամբ ընթացակարգը, այդ թվում՝ բանակցությունների հրավերը կասեցվել է մինչև ՀՀ ֆինանսների նախարարությունից այդ խնդրի վերաբերյալ գրավոր պատասխան ստանալը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.11.2021 թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01 ծածկագրով գնման ընթացակարգի «Գնահատել հայտերը» առաջադրանքի կատարման ընթացքում առաջացած խնդրի լուծման համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ հայտերի գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել: Հաշվի առնելով, որ վերոգրյալ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր» բաժնում, Նախարարությունն առաջարկել է գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով:

Հանձնաժողովի 30.11.2021 թ. ժամը 14:00 տեղի ունեցած նիստի թիվ 05 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ որոշվել է մրցույթի գնահատման գործընթացը շարունակել թղթային տարբերակով՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության վերոնշյալ գրությունը:

Թիվ 05 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնային առաջարկ ներկայացրել են «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությունը, «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը (արձանագրության մեջ կրկին սխալ է նշվել կազմակերպաիրավական ձևը) և «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը: Վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը 10.000 ՀՀ դրամով ցածր է եղել մյուս երեք ընկերությունների գնային առաջարկից:

Հանձնաժողովը կրկին որոշել է բոլոր մասնակիցներին 02.12.2021 թ. ժամը 11.00-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի 02.12.2021 թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 06 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ բանակցությունների արդյունքում մասնակիցները չեն փոխել հայտերով ներկայացված գնառաջարկները: Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ մրցույթի հայտերի վերջնական գնահատման

արդյունքում նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը:

Այսպիսով, 02.12.2021 թ. թիվ 06 արձանագրությամբ մրցույթի ընտրված մասնակից է ճանաչվել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը: Միաժամանակ որոշվել է ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո (անգործության ժամկետը հաշվարկվում է 2021 թ. դեկտեմբերի 03-ից դեկտեմբերի 07-ը ներառյալ) ծանուցել պայմանագիր կնքելու մասին:

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերությունը, Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները բողոքարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված, 06.12.2021 թ. Հանձնաժողովի քարտուղարից էլ. եղանակով խնդրել է տրամադրել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի անունից ներկայացված հայտում ներառված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ Հրավերի 4.3. կետին համապատասխան հայտին կցված գործակալության պայմանագրի պատճենը և «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-անունից որպես լիազորված անձ հանդես եկած Միքայել Ամիրաղյանի լիազորագիրը:

Հանձնաժողովի քարտուղար Աննա Մանգասարյանի կողմից տրամադրվել է Գործակալության պայմանագիրը, լիազորագիրը, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի դիմում-հայտարարությունը և մի շարք այլ փաստաթղթեր:

Գործակալության պայմանագրի համաձայն՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի ապահովագրական գործակալը, բայց միևնույն ժամանակ հանդիսանում է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության և «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերության ապահովագրական գործակալը նույնպես:

Սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը, մյուս մասնակիցների նման, ներկայացրել է գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարություն իր անունից, այլ ոչ թե «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կամ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության կամ «Արմենիա ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ ընկերության անունից, որոնց ապահովագրական գործակալն է հանդիսանում:

Նշված հայտարարությամբ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը հայտարարել է և հավաստել, որ բավարարում է «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով Գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում

ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

Նշված հայտարարությունը 25.11.2021 թ. ստորագրել է «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության լիազորված անձ Միքայել Ամիրաղյանը:

Լիազորագիրը տրվել է ոչ թե «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության, այլ «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերության կողմից, որի վրա առկա չէ կնիք, ինչը հնարավորություն կտար պարզելու, թե իրականում «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության կողմից է տրված լիազորագիրը, թե ոչ: Բացի նշվածից, լիազորագրով Միքայել Ամիրաղյանը լիազորվել է միայն «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերության անունից մասնակցել մրցույթներին, ստորագրելու մրցութային փաթեթը: Մինչդեռ տվյալ դեպքում Տավուշի մարզպետարանի կողմից գնումը կատարվում է ոչ թե մրցույթի, այլ գնանշման հարցման ձևով, որին մասնակցել է «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը, այլ ոչ թե «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերությունը:

II Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձն է:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիրը ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև սույն օրենքի համաձայն կնքված ԱՊՊԱ պայմանագիրն է:

ԱՊՊԱ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական

ընկերությունները, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

Նշված իրավական դրույթների վերլուծությունից հստակ է, որ Տավուշի մարզպետարանի կողմից հայտարարված Հարցմանը մասնակցել կարող էին միայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները, քանի որ միայն նրանք ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն, որպիսի նպատակով էլ պատվիրատուի կողմից հայտարարվել էր գնանշման հարցում: Իսկ ընտրված մասնակցի հետ պետք է կնքվի ԱՊՊԱ պայմանագիր, որի մի կողմում պետք է հանդես գան տեխնիկական բնութագրով նշված կազմակերպությունները, իսկ մյուս կողմում՝ համապատասխան ապահովագրական ընկերությունը:

Մինչդեռ տվյալ դեպքում մրցույթի ընտրված մասնակից ճանաչված «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը ԱՊՊԱ իրականացնելու իրավունք չունի, ուստի Հարցման շրջանակներում նրա հետ չի կարող կնքվել ԱՊՊԱ պայմանագիր: Հետևաբար, նրա կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

բ) Ինչպես արդեն նշվեց, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության անունից ներկայացված գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությունը 25.11.2021 թ. ստորագրել է «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության լիազորված անձ Միքայել Ամիրաղյանը:

Լիազորագիրը տրվել է ոչ թե «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության, այլ «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերության կողմից, որի վրա առկա չէ կնիք, ինչը հնարավորություն կտար պարզելու, թե իրականում «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության կողմից է տրված լիազորագիրը, թե ոչ: Բացի նշվածից, լիազորագրով Միքայել Ամիրաղյանը լիազորվել է միայն «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերության անունից մասնակցել մրցույթներին, ստորագրելու մրցութային փաթեթը: Մինչդեռ տվյալ դեպքում Տավուշի մարզպետարանի կողմից գնումը

կատարվում է ոչ թե մրցույթի, այլ գնանշման հարցման ձևով, որին մասնակցել է «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը, այլ ոչ թե «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 80-րդ կետի համաձայն՝ գնանշման հարցման ձևով գնում կատարելու դեպքում կիրառվում են սույն կարգի 7-րդ բաժնով սահմանված պայմանները՝ հաշվի առնելով, որ հայտերը ներկայացնելու համար նախատեսվող ժամկետը պետք է պակաս չլինի յոթ և ավելի տասնհինգ օրացուցային օրվանից…:

Գնանշման հարցման մասին հայտարարությունից հստակ է, որ տվյալ դեպքում գնումը կատարվում է ոչ թե մրցույթի ձևով, այլ գնանշման հարցման ձևով: Հետևաբար Միքայել Ամիրաղյանը իրավասու չէր «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության անունից ստորագրելու դիմում հայտը և ներկայացնելու այդ ընկերության շահերը հրավերի շրջանակներում, առավել ևս, որ նրան լիազորագիրը տրվել է «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊ ընկերության, այլ ոչ թե «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության կողմից: Բացի այդ, լիազորագրում չկա նաև նշում, թե ում առջև ներկայացվելու համար է տրվում լիազորագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Այսպիսով, վերոնշյալից հստակ է, որ Հրավերին մասնակցած «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության կողմից Միքայել Ամիրաղյանին չի տրվել լիազորագիր: Եթե անգամ համարենք, որ տրված լիազորագիրը պատշաճ անձի կողմից է տրվել Միքայել Ամիրաղյանին, ապա դրանում նշված լիազորությունների շրջանակում վերջինս չէր կարող հանդես գալ Տավուշի մարզպետարանի կողմից հայտարարված գնանշման հարցման հիման վրա իրականացվող գնման ընթացակարգին, քանի որ չի նշվել այն անձը, ում առջև ներկայացվելու համար տրվում է լիազորագիրը, ինչպես նաև չի նշվել գնանշման հարցմանը մասնակցելու իրավասությունը:

գ) Այժմ անդրադառնանք այն հարցին, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի հետ կնքված ապահովագրական գործակալության պայմանագիրը: Ընդ որում, Հարցման հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գործակալության

պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով: Մինչդեռ տվյալ հարցման շրջանակներում գործակալության պայմանագրի պատճենը հայտով չի ներկայացվել:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապահովագրական գործակալի գործունեությունը ապահովագրական ընկերության անունից և հաշվին ապահովագրական միջնորդային գործունեության իրականացումն է, այն է՝ երրորդ անձի կողմից՝ ապահովագրողների և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը, նրանց միջև ապահովագրության պայմանագրի կնքմանը դրդող, նպաստող, աջակցող կազմակերպչական, այլ փաստացի և իրավական գործողությունների իրականացում, մասնավորապես՝

ա. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.

բ. ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.

գ. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ Ընկերության թույլատրած չափերով:

Նշված դրույթներից հստակ է, որ ապահովագրական գործակալը ապահովագրական ծառայություններ մատուցելու իրավասություն չունի, որպիսի նպատակով Պատվիրատուի կողմից հայտարարվել է գնանշման հարցումը, և տեխնիկական-բնութագրում նշվել են այն ավտոմեքենաները, որոնց համար պետք է կնքվի ԱՊՊԱ պայմանագիր: Հակառակը՝ ԱՊՊԱ պայամանգիր կարող է կնքվել միայն ապահովագրական ընկերության հետ՝ որպես ապահովագրող, որպիսին «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը չի հանդիսանում: Ուստի վերջինիս հետ՝ որպես կատարող, այս պատճառաբանությամբ ևս չի կարող կնքվել հարցման հրավերին կից պայմանագիրը (հավելված 6):

Հետևաբար, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը՝ որպես ապահովագրական գործակալ, ի սկզբանե հարցմանը մասնակցելու իրավասություն չի ունեցել, սակայն դրան ոչ միայն մասնակցել է՝ որպես կատարող (ապահովագրող) ԱՊՊԱ պայմանագրեր

կնքելու ակնկալիքով, այլև անհասկանալի հաշվարկի հիման վրա առաջարկել է ավելի ցածր գնային առաջարկ (սակագին), որը տարբերվում է մյուս երեք ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկված գնից:

Հետևաբար, «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության անունից ներկայացված գնանշման հարցմանն մասնակցելու դիմում-հայտարարությունը, որով վերջինս հայտարարել է և հավաստել, որ բավարարում է «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով Գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, իրականում չի բավարարում:

Ուշագրավ է, որ գնանշման հարցման հրավերին կից պայմանագրի (1.1. կետ) համաձայն՝ Կատարողը ստանձնում է փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների մատուցման պարտավորությունը: Հետևաբար, առավել քան ակնհայտ է, որ ապահովագրական գործակալը, տվյալ դեպքում՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը չի կարող լինել նշված պայմանագրի կողմ (կատարող), քանի որ նրա կողմից ապահովագրական ծառայություններ չեն մատուցվում:

Այսպիսով, կարող ենք վերստին փաստել, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությունը՝ հանդես գալով որպես ապահովագրական գործակալ, ի սկզբանե Ընթացակարգին մասնակցելու իրավասություն չի ունեցել:

Այն, որ ապահովագրական գործակալի հետ չի կարող կնքվել հրավերում նշված պայմանագիրը, հաստատվում է նաև գնանշման հարցման հրավերին կից պայմանագրի 7.6. կետի բովանդակությամբ, որի համաձայն՝ եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում

դ) Ինչպես արդեն վերևում նշվեց, Հանձնաժողովի 30.11.2021 թ. ժամը 14:00 տեղի ունեցած նիստի թիվ 05 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ որոշվել է մրցույթի գնահատման գործընթացը շարունակել թղթային տարբերակով՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության վերոնշյալ գրությունը: Մինչդեռ հարցման

հայտարարության մեջ նշված է, որ հարցումն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հրավերի 11.1. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ սույն ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է:

Փաստորեն՝ գնման գործընթացը պետք է իրականացվեր էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, սակայն շարունակվել է թղթային տարբերակով, քանի որ տեխնիկական խնդրի պատճառով հայտը չի երևացել էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում, որտեղ և պետք է գնահատվեին հայտերը, նշանակում է՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարվեր չկայացած:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թ. դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով հաստատված հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ անձն ապահովում է բողոքարկման ընթացակարգում ներգրավված բոլոր կողմերի՝ տվյալ բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորությունը: Սույն կարգի իմաստով բողոքարկման ընթացակարգի պարտադիր կողմեր են համարվում պատվիրատուն, բողոք և/կամ համանման բողոք ներկայացրած անձը (անձինք), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող անձը (անձինք)՝ եթե բողոք բերողի իրավունքի ենթադրյալ խախտումը վերաբերում է էլեկտրոնային գնումների համակարգի աշխատանքին:

Գտնում ենք, որ Հանձնաժողովի 02.12.2021 թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 06 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությանը մրցույթի ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, իրավաչափ չէ, հակասում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, ԱՊՊԱ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ԱՊՊԱ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթաացի կազմակերպման» կարգի 80-րդ կետի պահանջներին, և որպես

հետևանք՝ անհիմն կերպով ապահովագրական ընկերությանը զրկում է ընտրված մասնակից ճանաչվելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ՝

1. պարտավորեցնել «ՀՀ Տավուշի մարզպետարան»-ի կարիքների համար հայտարարված «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մրցույթի հանձնաժողովին դադարեցնել 02.12.2021 թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 06 արձանագրությամբ՝ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀ Տավուշի մարզպետարան»-ի կարիքների համար հայտարարված «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մրցույթի հանձնաժողովին «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Պարտավորեցնել «ՀՀ Տավուշի մարզպետարան»-ի կարիքների համար հայտարարված «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մրցույթի հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած (սույն բողոքի խնդրամասի 1-ին և 2-րդ պահանջները մերժվելու դեպքում)»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Տավուշի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումն և հիմնավորումները.

Տավուշի մարզպետարանը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.12.2021թ. թիվ 03//06136-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր 08.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/20150-2021 գրությամբ ներկայացված բողոքն ուսումնասիրվել է ՀՀ Տավուշի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից: Ներկայացնում ենք մեր պարզաբանումը՝ ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ-ի ներկայացրած բողոքի կետերի վերաբերյալ.

Գնանշման հարցումը մրցույթ չէ. գտնում ենք, որ սխալ ձևակերպում է, քանի որ համաձայն գնումների օրենսդրության, գնման գործընթացը կատարվում է գնման տարբեր ընթացակարգերով, որոնց համար ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հրապարակված է մեկ ընդհանուր հրավերի օրինակելի ձև (այսուհետ Հրավեր), որում կա նշում *Եթե գնումն իրականացվում է գնանշման հարցման կամ հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով, ապա գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն օրինակելի փաստաթղթի հիման վրա հայտարարության և հրավերի տեքստերի պատրաստման ընթացքում, բոլոր այն բաժիններում, կետերում և պարբերություններում, ներառյալ մասնակիցների կողմից ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերում, որպես օգտագործված է «բաց մրցույթ» բառերը, փոխարինում է համապատասխանաբար «գնանշման հարցում» կամ «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնում» բառերով, իսկ ծածկագրում «ԲՄԾՁԲ» բառը՝ համապատասխանաբար «ԳՀԾՁԲ» կամ «ՀՄԱԾՁԲ» բառերով. արդյունքում Հրավերի տեքստի բովանդակային մասի փոփոխության պահանջ չկա՝ այդ թվում նաև Հրավերի 1-ին մասի 2-րդ և 4-րդ բաժիններով սահմանված գործակալության դեպքերի մասով: Բոլոր պատվիրատուները կատարում են գնման գործընթաց և/կամ գնում և/կամ մրցույթ տվյալ Հրավերով անկախ գնման ընթացակարգի ձևից:

«Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ իր անունից, այլ ոչ թե այլ ապահովագրական ընկերությունների անունից, ում հետ ունի գործակալության պայմանագրեր: Այս մասով Հրավերը հստակ սահմանում է, որ գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) մասնակցելու նպատակով արդեն հայտ ներկայացրած մասնակիցը: Այս պարագայում ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ-ն արդեն հայտ էր ներկայացրել: Միաժամանակ հայտնում ենք, որ Բի Բի Էս Սի ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գործակալության պայմանագրի 2.1 կետով՝ «Պայմանագրով սահմանված կարգով Ապահովագրության պայմանագրերի կնքումը կարող է իրականացվել, ինչպես Գործակալի, այնպես էլ Ընկերության կողմից», սահմանված են այն բոլոր իրավունքները, համաձայն որոնց գործակալը կարող է կնքել ապահովագրական պայմանագրեր:

Բողոքող անձի ներկայացրած հերթական փաստարկը, ըստ որի «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն և «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊԸ-ն տարբեր ընկերություններ են դրա համապատասխանությունը ստուգելը հանձնաժողովի լիազորությունների մեջ չի մտնում. հանձնաժողովը

առաջնորդվել է այն հանգամանքով, որ «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ի և «ԲԻԲԻԷՍՍԻ» ՍՊԸ-ի տնօրենների անունները, ազգանունները, հայրանունները և նրանց ստորագրությունները նույնն են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երրորդ անձը տվյալ պարագայում իմաստային առումով մրցույթներն անցկացնող Պատվիրատուներն են: Միաժամանակ նույն հոդվածի 5-րդ կետով հստակ սահմանված է, որ «Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ», որտեղ չկա կնիքի պահանջ:

«Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն հայտով չի ներկայացրել գործակալության պայմանագիրը, սակայն մինչև բանակցության օրվա սահմանված ժամը լրանալը, էլեկտրոնային եղանակով ներկայացրել է, որից հետո շտկման հնարավորության պահանջը անիմաստ է դարձել, և բանակցության նույն օրը թիվ 06 նիստի արձանագրության հետ մեկտեղ միաժամանակյա ուղարկվել է բոլոր մասնակիցներին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2021/93 բողոքի քննության արդյունքներով 16.12.2021թ. ժամը 09:15-ին որոշման նպատակով հրավիրված նիստի ընթացքում ներկայացվել է միջնորդություն՝ Ընկերությանը որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նիստի ընթացքում բավարարվել է, և վերջիններիս հնարավորություն է տրվել մինչ գործի ելքով որոշման հրապարակումը հայտնելու դիրքորոշումներ ներկայացված բողոքի վերաբերյալ:

«ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնել են հետևյալը.

«Պետության կողմից գործարկված էլեկտրոնային հասանելի հարթակ է գործում, որի միջոցով յուրաքանչյուր ոք կարող է այդտեղ ապահովագրություն իրականացնել,

պարտադիր չէ, որ լիցենզիա ունենալ ապահովագրական գործունեություն իրականացնելու համար, Դուք առանց լիցենզիայի կարող եք այդ ծառայությունները մատուցել:

Այսինքն՝ պահանջվող փաստաթղթերը, ինֆորմացիան մուտքագրել և ապահովագրություն կատարել:

«ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի կողմից անընդունելի է ապահովագրական ընկերության կողմից ներկայացրած բողոքն ամբողջությամբ, քանի որ, այդպես կոչված, իշխանության յուրացում չենք անում և, ըստ էության, լիցենզավորման գործունեության չենք էլ հավակնում, ուղղակի տվյալ հարթակի միջոցով մատուցելու ենք ապահովագրական ծառայություն:

«Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն չի հավակնում լինել ապահովագրական ընկերություն, քանի որ չունի նշված գործունեությունն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա, այլ հանդիսանում է ապահովագրական գործակալ, սակայն Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի անունից, այլ ոչ թե այլ ապահովագրական ընկերությունների անունից, ում հետ ունի գործակալության պայմանագրեր: Մրցույթը հաղթելու դեպքում էլեկտրոնային համակարգի միջոցով ապահովագրության ծառայություն է մատուցելու, այլ ոչ թե ապահովագրություն»:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/93 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Տավուշի մարզպետարանի կողմից իր կարիքների համար ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների ԱՊՊԱ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 06 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ին Ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչելու որոշման իրավաչափությունը, հայտնելով, որ «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն հանդիսանում է ապահովագրական գործակալ, իսկ ապահովագրական գործակալը ապահովագրական ծառայություններ մատուցելու իրավասություն չունի, ուստի վերջինիս հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի 07.12.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, Տավուշի մարզպետարանի 10.12.2021թ. թիվ 03//06136-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասին հայտարարության համաձայն՝ սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում «ՀՀ Տավուշի մարզպետարանի» կարիքների համար՝ «ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների» ձեռքբերումը:

Այսպես՝ Տավուշի մարզպետարանի կողմից իր կարիքների համար ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների ԱՊՊԱ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 06 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ին Ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչելու որոշման իրավաչափությունը, հայտնելով, որ «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն հանդիսանում է ապահովագրական գործակալ, իսկ ապահովագրական գործակալը ապահովագրական ծառայություններ մատուցելու իրավասություն չունի, ուստի վերջինիս հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Վերոնշվածի վերաբերյալ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 983-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ

ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

Օրենսգրքի 994-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որպես ապահովագրողներ՝ ապահովագրության պայմանագրեր կարող են կնքել ապահովագրության համապատասխան դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) իրավական ակտերով, Բյուրոյի կանոններով և իրավական այլ ակտերով:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1) ԱՊՊԱ՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն.

2) ***<u>ԱՊՊԱ պայմանագիրը ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերության և ապահովադրի միջև սույն օրենքի համաձայն կնքված ԱՊՊԱ պայմանագիր:</u>***

(...)

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները</u>***, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

(...)

10) ապահովագրական գործունեություն՝ անձի կողմից որպես ապահովագրող կողմ պարբերաբար իր անունից ապահովագրական գործարքների կնքմանը, ինչպես նաև դրանցով ստանձնած պարտավորությունների կատարմանն ու ձեռք բերած իրավունքների իրականացմանն ուղղված փաստացի գործողությունների ամբողջություն.

11) ապահովագրական ընկերություն (Ընկերություն)՝ ***սույն օրենքով սահմանված կարգով <u>ապահովագրական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:</u>***

(...)

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության դասերն են՝ ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրությունը:

Ընդ որում, ապահովագրական ընկերությունը սույն օրենքով սահմանված կարգով ապահովագրական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձն է:

Ուսումնասիրելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից https://www.cba.am/ պաշտոնական կայքում հրապարակված ապահովագրական ընկերությունների վերաբերյալ ցանկը՝ արձանագրում եմ, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն նշված ցանկում ընդգրկված չէ, այսինքն՝ չի հանդիսանում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու

իրավունք ունեցող ընկերություն, այսինքն՝ նշված գործունեությունն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա չունի:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Տավուշի մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների (ԱՊՊԱ) մատուցման պայմանագիր, մինչդեռ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն, չունենալով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա և չհանդիսանալով ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեցող ապահովագրական ընկերություն, չի կարող իրականացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված ապահովագրական ծառայությունների մատուցում, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 02.12.2021թ. նիստի թիվ 06 արձանագրության համաձայն «ԲԻ Բի ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ին ճանաչելով ընտրված մասնակից և որոշում կայացնելով վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել, գործել է ոչ իրավաչափ:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն ***<u>26.12.2018թ.-ից հաշվառված է (հաշվառման N 12119) ՀՀ Կենտրոնական բանկի ապահովագրական գործակալների միջնորդների ռեգիստրում</u>***՝ որպես «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ, «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲ ընկերությունների ապահովագրական գործակալ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***ապահովագրական գործակալի գործունեություն կարող են իրականացնել միայն Կենտրոնական բանկի***՝ սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով ***միջնորդների ռեգիստրում որպես ապահովագրական գործակալ հաշվառված անձը:***

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

(...)

8) ապահովագրական գործակալ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու համար Կենտրոնական բանկի ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված անձ.

9) ապահովագրական գործակալի գործունեություն՝ անձի կողմից մեկ կամ մի քանի ապահովագրական և (կամ) վերաապահովագրական ընկերությունների անունից և հաշվին ապահովագրական միջնորդային գործունեության իրականացում.

12) ապահովագրական միջնորդային գործունեություն՝ երրորդ անձի կողմից՝ ապահովագրողների (վերաապահովագրողների) և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը, նրանց միջև ապահովագրության պայմանագրի կնքմանը դրդող, նպաստող, աջակցող կազմակերպչական, այլ փաստացի և իրավական գործողությունների իրականացում, մասնավորապես՝

ա. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.

բ. ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.

գ. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ Ընկերության թույլատրած չափերով:

(...)

Վերը նշված իրավական կարգավորումները ցույց են տալիս, որ ապահովագրական գործակալն ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված չէ:

Ինչ վերաբերում է «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից հայտնած այն դիրքորոշմանը, որ «Բի Բի Էս Սի» ՍՊԸ-ն չի հավակնում լինել ապահովագրական ընկերություն, քանի որ չունի նշված գործունեությունն իրականացնելու համար պահանջվող լիցենզիա, այլ հանդիսանում է ապահովագրական գործակալ, սակայն Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի անունից, այլ ոչ թե այլ ապահովագրական ընկերությունների անունից, ում հետ ունի գործակալության պայմանագրեր և մրցույթը հաղթելու դեպքում էլեկտրոնային համակարգի միջոցով ապահովագրության

ծառայություն է մատուցելու, այլ ոչ թե ապահովագրություն, արձանագրում եմ հետևյալը.

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ Ընկերությունները պարտավոր են իրենց ինտերնետային կայքում և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Ընկերության գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իրենց կողմից առաջարկվող **<u>ապահովագրական ծառայությունների վերաբերյալ</u>**՝ ըստ ապահովագրության տեսակների, դասերի և ենթադասերի, այդ թվում՝ ապահովագրության պայմանները և առաջարկվող ապահովագրական սակագները:

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո ԻԱՄ-ի խորհրդի որոշմամբ հաստատված «Կանոններ RL 1-001» ԱՊՊԱ ընդհանուր պայմանների 2-րդ բաժնի 5-րդ գլխի 47-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագիրն առցանց էլեկտրոնային եղանակով կնքվելու դեպքում սույն կանոններով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում ՊԿԱ-ին, և դրանց տիրապետելու և այդ տվյալներն առցանց մուտքագրելու միջոցով Օրենքի համաձայն Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասություն ունենալու համապատասխան հիմքերի առկայության, ինչպես նաև մուտքագրվող տվյալների՝ իրականությանը համապատասխանելու համար պատասխանատվությունը (բացասական հետևանքների 19 ռիսկը) կրում է Ապահովադիրը: Ընդ որում, **<u>առցանց էլեկտրոնային եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագիրը բոլոր դեպքերում համարվում է անձամբ Ապահովադրի կողմից կնքված՝ անկախ այն հանգամանքից, թե համապատասխան տվյալները փաստացի ում կողմից է մուտքագրվել, կամ պայմանագրի դիմաց վճարումն ում կողմից է կատարվել:</u>**

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների այն պնդումները, որ կազմակերպված Ընթացակարգի շրջանակներում «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի հետ տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների ԱՊՊԱ ձեռքբերման նպատակով կնքվելիք պայմանագրի արդյունքում վերջիններիս կողմից մատուցվելու է ապահովագրական ծառայություն, այլ ոչ թե ապահովագրություն և այն իրականացվելու է էլեկտրոնային հարթակի միջոցով, ընդ որում, Տավուշի

մարզպետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ի անունից, այլ ոչ թե այլ ապահովագրական ընկերությունների անունից, չեն բխում տվյալ ոլորտի իրավակարգավորումներից, քանի որ ապահովագրական ծառայությունն **ապահովագրական ընկերության** կողմից առաջարկվող ծառայությունն է՝ ըստ ապահովագրության տեսակի, դասի և ենթադասի, իսկ ինչ վերաբերում է էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքելուն, ապա տվյալ դեպքում այն համարվելու է անձամբ Ապահովադրի կողմից կնքված, արդյունքում ԱՊՊԱ պայմանագրի կողմերն են հանդիսանալու Ապահովադիրը և ապահովագրական ընկերությունը, այսինքն՝ այն պնդումները, որ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊԸ-ն օժտված է էլեկտրոնային եղանակով ապահովագրական ծառայություններ մատուցելու իրավասությամբ, չունեն որևէ փաստական և իրավական հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից 07.12.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀՏՄ-ԳՀԾՁԲ-22/01» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել,
2. դադարեցնել գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. հրավիրված նիստի թիվ 06 արձանագրությամբ «ԲԻ ԲԻ ԷՍ ՍԻ» ՍՊ ընկերությանն Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**